

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԱՌԱՔՅԱԼԸ

Վախճանվեց իին մեծ մարդասիրության առաջալը, Շվեյցերի, Նանսենի, Գանդիի, Թունանյանի կրտսեր եղբայրը, ավարտվեց մարդկության և մարդկայնության 20-րդ դարի մեծագույն կոթողը, որ էր ամերիկացի և հայ Վիլյամ Սարոյանի անձի և գործի միասությունը: Սև, բրացնող, կաշկանդիչ վիշտը թեև ծանրորեն նստել է սրտին ու մտքին վրա, բայց նրա անձն ու գործը ես դարի մեծառույնն եմ համարում ամենայն սրափությամբ, իիշելով և արտառաստ հաղթվող-չպարտվող ու ներքուստ և հաղթվող, և պարտող, վիխրուն սրտի տեր Շեմինգուեյի լուսե կերպարը, իիշելով և Ֆոլքերի մոգական ուժը, և Շոլտխովի կազակական զնգուն արյունն ու զնգուն թրատումներով լեցուն պատկերները, ասում եմ սրափույամբ այն օրերի, երբ ինքը՝ Սարոյանը կար, նրա յուրաքանչյուր այցը հայրենիք տոն էր բոլորին համար, մեկնումը՝ կողոպտվառության զգացում և հաջորդ օրերը՝ նրա վերադարձի արևածային սպասում:

Ինչպես ցերմ լույսն ինքը՝ նա իրենով լցնում էր մարդու մեջ և մարդկանց միջև բացվող վիհերը և արևի պես ճախրում էր այլս անվիի մարդկանց երկնքով և կարող էր և իրավունք ուներ ասեռու, թե ինքը վիհեր չի տեսնում ու ճանաչում, քանի որ դրանք նրա համար իսկապես չկային, որովհետև լեցված էր նրա սեփական լույսով:

Պատահական չէր տիտանական նրա կերպարանքի ոչ առացումն ու վիթխարիացումը աշխարհի ճգնաժամային հեռավոր երեսնական թվականներին (նրա խրախուսիչ, զվարթ կանչը հեղուկ աշխարհում թարմ օդի պես պետք էր), ոչ էլ գորեք անհետառումն էր պատահական պատերազմի ու սառը պատերազմի մղջաանջային մեկուկես տասնամյակում (նրան՝ մեծ մարդասերին, նրան՝ խեղճերի ու որբերի հովանավոր Յայրիկին, խցկել էին բանակային հագուստի մեջ և շպրտել ռազմաճակատ) և ոչ էլ, պառլամենտյորի դրոշը ձեռքին, վերստին առաջացումն ու վիթխարիացումն էր պատահական՝ արդեն մեզանում, մեր երկրում:

Գիտեր ուր է գալիս և ինչու է գալիս, իր մեծ նախնին՝ Թունանյանը, նույն այդ առաքելության մեջ կյանք էր մաշել. իր գրչեղբայրը՝ Ֆոլքերը, նույն այդ առաքելությամբ, Սարոյանի խոսքերով, Ամերիկայի կառավարությունից դրկվել էր ճապոնիա երկու երկրների արանքի սառնությունը ջերմացնելու, նույն այդ մարդասիրությամբ հառնել էր, երկու պատերազմի միջև, Նանսենի կերպարանքը՝ մինչև Ուրալ ու Յայաստան ավերված Եվրոպայի վրա: Դա մեծ մարդկանց ճակատագիրն է: Նույն այդ առա-

թելությամբ վերջին պատերազմի և մյուս սպառնալիքի արանգում կանգնեց հայազգի մեծ ամերիկացին՝ Սարոյանը: Կանգնեց իր ստեղծած սքանչելի երեխաների, երեխայի մաքրության՝ ճիշտ իր՝ Սարոյանի մաքրության, հայերի, մեքսիկացիների, նորվեգ-ների, ասորիների, կանանց, տղանարդկանց բազմությամբ, դերգորյան ու օսվենցիմյան գեհենների հուշով... և նրանցից յուրաքանչյուրն ու բոլորը պատերազմի ժխտումն են, նրանցից ոչ մեկի մեջ պատերազմ չկա, նրանք հերքումն են չարության ու հիմարության և առավել՝ մարդու աստվածային ճակատին նոր գիր գրելու ողբերգական հավակնության: Լման հսկա, անթերի, աստվածակերպ՝ նա Ծովինար խանումի՝ մարդկության մեծ մոր թերատքութից ելածներիս ծովությունների վրա ոչ թե ծաղրուծիծաղում էր, այլ արտասվում, թերատքութից ասես ինքն էր ելել և ոչ թե մենք:

Ոչ մեկը չափութք է գիտենա, թե ես իր հետ չեմ, ասում էր նա, և դա այդպես էր՝ նա ռուսի հետ էր և ամերիկացու, Չարենցի հետ էր և Տոլստոյի, երաժշտի հետ էր և վարձու բանվորի, իսկ երբ այլևս անհնար էր լինում տեղավորվել որևէ վիժվածքի ու վիժվածքային որևէ երևույթի մեջ՝ նա փախս էր տալիս մանկության ու արվեստի աշխարհ, իրեն տեղավորում երեխաների ու երեխայակերպ մեծերի մեջ:

Օսվենցիմի գեհեն բանգարանում նրա հետ եղածները վկայում են, որ ուրիշները ֆաշիզմի ու զոհերի վրա զարհուրում, զարմանում, հորգվում կամ փշաքաղված նայում էին և միայն նա՝ Սարոյանն էր արտասվում, երեխայի նման հեկեկում էր: Դա արտասութ էր ոչ թե ոսկորների, կանանց ծամերի ու մոխիրների վրա - դրանք արդեն մոխիր ու ծամեր էին - այլ ստոր, դաժան ու հավակնութ լինելու մարդու անտակ կարողության:

Ես բախս ունեցա երկօրյա նրա ճամփորդության ուղեկից լինել. բազում լավ մարդկանցից նա վերջում առանձնացրեց ամենալավին՝ ութամյա մի աղջնակի՝ խոշոր աչքերը հավատով քեզ հառած Անուշին. «Ան անպաշտպան էր, ինչպե՞ս պիտի ապրի»:

Նա մարմնացյալ ազատությունն էր, և շփումը նրա մեծ, ամբողջական, լույսով ու ճախրանքով շնչող գործի և նրա օրվա մի ռոպեի հետ՝ քեզ ազատ ոգու թևեր էր տալիս:

Իրենց խճած և իրենք էլ մեջը խճողված կյանքի համար մարդիկ շատ անգամներ են Սարոյանի դուռը գնալու և ոչ մի անգամ նրա դրնից չեն դառնալու կամկար ու վիատ - նա ինքը հաղթական, բնական կյանքն է:

Նրա մեծ ոգին հիմա սավառնում է տագնապներով ու հույսերով ողողված երկրի վրա, և երանի նրան, ուն մեջ կրնակվի այդ ոգին: